ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

# <<ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-25/01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ք. Իջևան

<< 02>> հոկտեմբեր 2025թ.
ժամը 12:00

**Մասնակցում էին.**

Միսակ Մելքումյան - Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

**Անդամներ՝** Աղաբեկ Գալստյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Արտակ Սարգսյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Սիրանուշ Չիբուխչյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Աննա Մանգասարյան -Հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

<<ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-25/01>> **ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների վերաբերյալ.**

1. Տվյալներ մրցույթի մասնակիցների վերաբերյալ.

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | ՀՎՀՀ, էլ. հասցե | Չափաբաժնի համարը | Գնային առաջարկ առանց ԱԱՀ գումար/ՀՀ դրամ | Գնային առաջարկ ներառյալ ԱԱՀ գումար/ՀՀ դրամ | Նախահաշվային արժեք/ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ ՍՊԸ | 08914368 | 1 | 164 058 510 /մեկ հարյուր վաթսունչորս միլիոն հիսունութ հազար հինգ հարյուր տասը | 196 870 212 /Մեկ հարյուր իննսունվեց միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր տասներկու/ | 249 202 800 |
| 2 | ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՃՇՇ ՍՊԸ | 08618778 | 1 | 182 748 720 /մեկ հարյուր ութսուներկու միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր քսան | 219 298 464 /երկու հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր իննսունութ հազար չորս վաթսունչորս | |

2. Տվյալներ մասնակիցների կողմից հրավերով ոչ գնային չափանիշներով պահանջվող փաստաթղթերը և հայտի ապահովման փաստաթուղթը ներկայացնելու վերաբերյալ.

| Կազմակերպության անվանումը | Շտկման ենթակա փաստաթուղթ՝ Լիցենզիա | Շտկման ենթակա փաստաթուղթ՝ աշխատանքային ռեսուրսների առկայություն, գրավոր համաձայնություններ՝ եթե գործատուն այլ է և դիպլոմների պատճեններ, տվյալ պահանջը մանրամասն ներկայացված է Հրավերի այլ պահանջներ փաստաթղթում: | Շտկման ոչ ենթակա փաստաթուղթ՝ Հայտի ապահովում | Շտկման ենթակա փաստաթուղթ՝ Սարքեր և սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն | Շտկման ենթակա փաստաթուղթ՝ Մասնագիտական հմտությունները հիմնավորող փաստաթղթեր |
|---|---|---|---|---|---|
| ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ ՍՊԸ | | | Անբավարար, հայտի ապահովումը մասնակիցը ներկայացրել է բանկային երաշխիքի տեսքով, որի վավերականության ժամկետը չի ապահովում Հրավերով սահմանված մեկ հարյուր քսան աշխատանքային օրը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն մասնակցի հայտը մերժվում է:** | | |
| ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՃՇՇ ՍՊԸ | Բավարար | Բավարար, աշխատանքային ռեսուրսների ստաժը հիմնավորող փաստաթղթերը մասնակիցը ներկայացրել է հայտերը բացելուց հետո մինչև հայտերի գնահատման ավարտը՝ հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին ուղարկելու միջոցով: | Բավարար | Բավարար, Հրավերով պահանջվող Հավելված 1.2-ի առաջին տողում նշված պահանջը բավարարող փաստաթղթի պատճենը մասնակիցը ներկայացրել է հայտերը բացելուց հետո մինչև հայտերի գնահատման ավարտը՝ հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին ուղարկելու միջոցով: | Բավարար |

ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-25/01 ծածկագրով "**ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Ասլանյան փողոցի նոր ասֆալտապատ հատվածից մինչև Գանձաքար վարչական բնակավայրի սկզբնամասում գտնվող մինչև կամուրջ /ՊԿ0+00-ՊԿ12+55/ ասֆալտապատման աշխատանքների**" ձեռքբերման մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքներից ելնելով և հիմք ընդունելով օրենսդրության պահանջները, գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.

1. Մերժել ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ ՍՊԸ-ի հայտը, համաձայն "ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ'' ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

2. Մրցույթի ընտրված մասնակից ճանաչել ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՃՇՇ ՍՊԸ-ին:
3. Հրապարակել պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու, պայմանագրի ու որակավորման ապահումներ (տուժանքների համաձայնագրերի տեսքով) ներկայացնելու մասին:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մելքումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Ա. Սարգսյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան